

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2008 թվականի հունիսի 17-ին

ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքի նպատակը բանկերի կողմից քաղաքացիների ավանդների ներգրավման պայմանների եւ կարգի վերաբերյալ միասնական կանոնների սահմանումն է եւ այդ կանոնների միջոցով սպառողների իրավունքների պաշտպանությունը:

ՀՈԴՎԱԾ 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն օրենքը կարգավորում է բանկերի կողմից քաղաքացիների ավանդների ներգրավման ժամանակ բացահայտվող տեղեկատվության շրջանակը, այդ տեղեկատվության տրամադրման, ավանդային պայմանագրերի գովազդման, ավանդների նկատմամբ տոկոսների հաշվարկման կարգը եւ պայմանները, ինչպես նաեւ ավանդատուների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանող այլ իրավահարաբերություններ:

ՀՈԴՎԱԾ 2. ՕՐԵՆՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) բանկային ավանդ (այսուհետ՝ ավանդ)՝ բանկային ավանդ կամ բանկային հաշվում առկա դրամական միջոցներ.

2) ավանդային պայմանագիր՝ սույն օրենքով սահմանված ավանդը ներգրավելու նպատակով կնքված պայմանագիր.

3) ավանդատու՝ քաղաքացի, որը կնքել է ավանդային պայմանագիր.

4) բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից բանկային գործունեության լիցենզիա ստացած բանկ կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղ.

5) սակագներ՝ ավանդի սպասարկման գործառնությունների համար ավանդատուի կողմից բանկի ծառայությունների դիմաց վճարները կամ տարեկան տոկոսային եկամտաբերությունը նվազեցնող այլ վճարներ, բացառությամբ որպես տուժանք կատարված վճարների.

6) տարեկան տոկոսային եկամտաբերություն (Annual Percentage Yield կամ APY)՝ այն տոկոսը, որն անձը կստանա 1000 դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման եւ տոկոսների կապիտալացման (compounding) ու վճարման հաճախականության հետեւանքով: Կենտրոնական բանկը իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգ.

7) տարեկան պարզ տոկոսադրույքի չափ (Annual Rate of Simple Interest)՝ տարեկան կտրվածքով հաշվարկված տոկոսադրույքի չափը, որը վճարվում է տոկոսների կապիտալացման յուրաքանչյուր գործընթացի ժամանակ.

8) տուժանք (տույժ, տուգանք)՝ ավանդատուի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում բանկին վճարվող հատուցում կամ տարեկան տոկոսային եկամտաբերության նվազեցում կամ ավանդատուի համար որել է այլ անբարենպաստ հետեւանքի առաջացում.

9) Ֆինանսական համակարգի հաշտարար՝ "Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անձ:

ՀՈԴՎԱԾ 3. ՀՐԱՊԱՐԱՎՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Ավանդների ներգրավման, ավանդային պայմանագրերի կնքման վերաբերյալ բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կամ ինտերնետ ցանցում տեղադրված որել է գովազդ, հայտարարություն, առաջարկ, օֆերտա կամ օֆերտա անելու հրավեր, որը նշում է պարունակում ավանդի դիմաց վճարվող որոշակի տոկոսադրույքի, եկամտաբերության կամ որել է այլ հատուցման չափի մասին, պարտադիր պետք է առնվազն հայերենով (բացառությամբ օտար լեզուներով տպագրվող թերթերի եւ հատուկ հրատարակությունների), հստակ եւ առանց որել է շփոթեցուցիչ, խրթին կամ մոլորեցնող ձեւակերպումների ներառի՝

1) Կենտրոնական բանկի սահմանած կարգով հաշվարկված տարեկան տոկոսային եկամտաբերության չափը.

2) ավանդային պայմանագրի գործողության ժամկետը, որի ընթացքում ավանդատուն

կստանա խոստացված տարեկան տոկոսային եկամտաբերությունը.

3) տարեկան տոկոսային եկամտաբերությունն ապահովելու համար պահանջվող հաշվի նվազագույն մնացորդի չափը եւ ժամանակահատվածը կամ ժամկետային սահմանափակումները.

4) տարեկան տոկոսային եկամտաբերությունն ապահովելու համար պահանջվող ավանդի նվազագույն սկզբնական գումարի չափը, եթե այդ գումարի չափը գերազանցում է տարեկան տոկոսային եկամտաբերությունն ապահովելու համար պահանջվող հաշվի նվազագույն մնացորդի չափը.

5) եթե տվյալ հաշվի տեսակի համար բանկի կողմից նախատեսված կամ սահմանված են սակագներ կամ տարեկան տոկոսային եկամտաբերությունը նվազեցնող այլ պայմաններ, ապա հայտարարություն այն մասին, որ բանկի սահմանած սակագների կամ այլ պայմանների կիրառման հետեւանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը կարող է նվազել.

6) եթե տվյալ հաշվի տեսակի համար բանկի կողմից նախատեսված կամ սահմանված է որեւէ տուժանք, ապա հայտարարություն՝ նման տուժանքի կիրառման դեպքերի մասին.

7) տոկոսագումարների հարկման մասին հայտարարություն:

2. Եթե ավանդների ներգրավման, ավանդային պայմանագրերի կնքման կամ հաշիվների բացման վերաբերյալ բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կամ ինտերնետ ցանցում տեղադրված որեւէ գովազդ, հայտարարություն, առաջարկ, օֆերտա կամ օֆերտա անելու հրավեր հիշատակում է, որ ավանդի հատուցումը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից, ապա այն պարտադիր պետք է հայերենով, հստակ եւ առանց որեւէ շփոթեցուցիչ, խրթին կամ մոլորեցնող ձեւակերպումների տեղեկատվություն պարունակի "Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով երաշխավորված ավանդի չափերի մասին: Հայերենին զուգահեռ այլ լեզուների օգտագործումը չի արգելվում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, եւ 6-րդ կետերով նախատեսված տեղեկատվությունը ենթակա չէ պարտադիր հրապարակման հեռուստատեսությամբ հեռարձակվող կամ արտաքին գովազդի վահանակների միջոցով իրականացվող գովազդի, հայտարարության, առաջարկի, օֆերտայի կամ օֆերտա անելու հրավերի դեպքում: Սույն մասով նախատեսված գովազդը նշում է պարունակում այն մասին, թե որտեղ կարելի է ծանոթանալ գովազդվող ավանդի պայմաններին:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունների որոշ տեսակների համար Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել պարտադիր կիրառման ենթակա տեքստեր կամ օրինակելի ձեւեր եւ նվազագույն պահանջներ:

ՀՈՂԱԾ 4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԸ

1. Բանկը պարտավոր է իր կողմից առաջարկվող յուրաքանչյուր տիպի ավանդային պայմանագրի համար հաստատել եւ ունենալ սակագների, տոկոսադրույքների, տարեկան տոկոսային եկամտաբերության, տույժերի եւ ավանդների ներգրավման կարգի եւ պայմանների վերաբերյալ տեղեկատվական ամփոփագիր: Բոլոր տիպի ավանդային պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվական ամփոփագրերը կարող են համախմբվել նաեւ մեկ միասնական տեղեկատվական ամփոփագրում, պայմանով, որ միասնական տեղեկատվական ամփոփագիրը պարունակի յուրաքանչյուր տիպի ավանդային պայմանագրի վերաբերյալ սույն օրենքով սահմանված տեղեկատվությունը:

2. Բանկի հաստատած եւ քաղաքացիներին տրամադրվող յուրաքանչյուր տեղեկատվական ամփոփագիր պետք է հստակ եւ առանց որեւէ շփոթեցուցիչ, խրթին կամ մոլորեցնող ձեւակերպումների առնվազն պարունակի հետեւյալը.

1) տեղեկատվություն սակագների եւ տուժանքների մասին, մասնավորապես՝

ա. հաշվից գանձվելիք կամ ավանդատուի կողմից վճարվելիք սակագների եւ տուժանքների նկարագրությունը, չափերը (կամ դրանց հաշվարկման մեթոդը) եւ կիրառման դեպքերը, կարգն ու պայմանները,

բ. այն դեպքում, երբ հաշվի նվազագույն մնացորդ չպահելու համար գանձվելու են սակագներ կամ տուժանքներ, ապա հաշվի նվազագույն մնացորդի չափերը կամ նվազագույն մնացորդի հաշվարկման մեթոդը.

2) տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ, մասնավորապես՝

ա. տարեկան տոկոսային եկամտաբերության չափը՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով հաշվարկված,

բ. ավանդային պայմանագրի գործողության ժամկետը, որի ընթացքում ավանդատուն կստանա խոստացված տարեկան տոկոսային եկամտաբերությունը,

գ. տարեկան պարզ տոկոսադրույքի չափը,

դ. տոկոսների կապիտալացման (compounding) եւ վճարման հաճախականությունը, եւ հաշվի այն մնացորդի հաշվարկման մեթոդը, որի նկատմամբ վճարվելու են տոկոսներ,

զ. հաշվի այն մնացորդի չափը, որը պետք է պահպանվի խոստացված տոկոսները կամ այլ եկամուտները ստանալու համար, ինչպես նաեւ այդ մնացորդի հաշվարկման մեթոդը,

է. այն ժամանակահատվածային պահանջները, որոնք անհրաժեշտ է պահպանել խոստացված տոկոսները կամ այլ եկամուտները ստանալու համար,

ը. կիրառելիության պարագայում տեղեկատվություն այն մասին, որ հավելագրված, սակայն դեռեւս չվճարված տոկոսները չեն վճարվելու, եթե ավանդատուն մարման ժամկետից շուտ է պահանջում ավանդի գումարը,

թ. հայտարարություն այն մասին, որ բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների եւ բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

ժ. տվյալ չեսակի ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ.

3) հաշվի սպասարկումից կամ ավանդային պայմանագրից բխող վեճերի լուծման կարգի, պայմանների եւ սահմանափակումների, ինչպես նաեւ ավանդատուի իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեղեկատվություն.

4) սույն հոդվածում չներառված, սակայն սույն օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված հրապարակման ենթակա այլ տեղեկատվություն.

5) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:

3. Տեղեկատվական ամփոփագրերը գրվում են հայերեն: Հայերենին զուգահեռ այլ լեզուների օգտագործումը չի արգելվում:

4. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սույն հոդվածի պատշաճ կիրառման նպատակով սահմանել տեղեկատվական ամփոփագրերի պարտադիր կիրառման ենթակա ձեւ, տեքստ կամ օրինակելի տարբերակներ, ինչպես նաեւ նվազագույն պահանջներ:

ՀՈՂՎԱԾ 5. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

1. Բանկը պարտավոր է տեղեկատվական ամփոփագրերը տեղադրել եւ պահպանել իր պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաեւ դրանք անվճար տրամադրել`

1) բանկի տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի` նրա առաջին իսկ պահանջով.

2) ավանդատուին` մինչեւ ավանդային պայմանագրի կնքումը եւ (կամ) հաշվի բացումը.

3) այն ավանդատուին, որը բանկի հետ կնքել է երեսնօրյա ժամկետը գերազանցող ժամկետային ավանդային պայմանագիր, եւ այդ պայմանագիրը ենթակա է երկարաձգման` առանց ավանդատուի կողմից բանկին տեղեկացնելու: Այս դեպքում բանկը պարտավոր է տեղեկատվական ամփոփագրին ավանդատուին տրամադրել կամ առաքել ավանդային պայմանագրի ժամկետը լրանալու օրվանից տասնհինգ օրացուցային օր առաջ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված դեպքում բանկը պարտավոր չէ տեղեկատվական ամփոփագրեր տրամադրել, եթե երկարաձգվող ավանդային պայմանագրի պայմանները չեն փոխվում:

3. Ստորագրությունների մեխանիկական եւ պատճենահանման այլ միջոցներով ֆաքսիմիլ վերատառությունների, էլեկտրոնային թվային ստորագրության կամ ստորագրության այլ նմանօրինակ ձեւերով կնքված ավանդային պայմանագրերի համար Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել բանկի կողմից ավանդատուին տեղեկատվական ամփոփագրի տրամադրման նվազագույն պահանջներ:

ՀՈՂՎԱԾ 6. ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԸ

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի, բանկը պարտավոր է առնվազն երեսնօրյա պարբերականությամբ ավանդատուին տրամադրել ավանդատուի` բանկում առկա յուրաքանչյուր հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք, որում հստակ եւ առանց որեւէ շփոթեցուցիչ, խրթին կամ մոլորեցնող ձեւակերպումների ներկայացվում են`

1) յուրաքանչյուր օրվա կտրվածքով հաշվի դեբետագրումները, կրեդիտագրումները եւ հաշվի մնացորդը.

2) վաստակած տարեկան տոկոսային եկամտաբերության չափը.

3) ստացված տոկոսի գումարը.

4) գանձված սակագները եւ տուժանքները.

5) հաշվետու ժամանակաշրջանի օրերի քանակը:

2. Բանկը պարտավոր չէ ավանդատուին հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում բանկը տվյալ հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:

3. Ավանդատուի պահանջով բանկը պարտավոր է հնգօրյա ժամկետում ավանդատուին տրամադրել բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք՝ բանկի հայտարարած սակագներով:

4. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը, վաստակած տարեկան տոկոսային եկամտաբերությունը եւ տոկոսի տարեկան դրույքաչափը կլորացվում են առնվազն մինչեւ մեկ հարյուրերորդականը (0.1%):

5. Սույն հոդվածով նախատեսված քաղվածքները ավանդատուին տրամադրվում են գրավոր եղանակով՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ այն դեպքի, երբ ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա հրաժարվել է հաշվի քաղվածքները փոստային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ հաշվի քաղվածքները էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու պայմանով: Հաշվի քաղվածքները էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատուին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի հաշվի քաղվածքները փոստային կապով ստանալու իր իրավունքից:

6. Եթե հաշվի քաղվածքները ավանդատուին առձեռն են հանձնվում բանկի տարածքում, ապա բանկը պարտավոր է առնվազն 3 տարի պահպանել ավանդատուի կողմից չպահանջված հաշվի քաղվածքները:

7. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հաշվի քաղվածքի օրինակելի ձևեր, ինչպես նաև նվազագույն պահանջներ:

ՀՈԴՎԱԾ 7. ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

1. Բանկը տոկոսների հաշվարկն իրականացնում է հաշվում առկա ավանդի ամբողջ գումարի նկատմամբ, ավանդային պայմանագրի ողջ ժամկետի համար՝ օրական կտրվածքով: Ընդ որում, բանկը յուրաքանչյուր օրվա տոկոսադրույքը հաշվարկում է սահմանված տոկոսադրույքի առնվազն 1/365 հարաբերակցությամբ (իսկ նահանջ տարվա համար բանկը օգտագործում է 1/366 հարաբերակցությունը):

ՀՈԴՎԱԾ 8. "ՈՒՎՃԱՐ" ԲԱՌԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՎԿՈՒՄԸ

1. Բանկերին արգելվում է ավանդների ներգրավման, ավանդային պայմանագրերի կնքման կամ հաշիվների բացման վերաբերյալ բանկի կողմից իրականացվող որևէ գովազդում, հայտարարությունում, առաջարկում, օֆերտայում կամ օֆերտա անելու հրավերում ավանդային պայմանագիրը նկարագրել, բացատրել կամ գովազդել "անվճար" կամ նմանատիպ իմաստ ունեցող այլ բառերի կիրառմամբ, եթե՝

1) որևէ ժամանակահատվածում սակագներից կամ տույժերից խուսափելու համար անհրաժեշտ է՝

ա. համապատասխան ժամանակահատվածի ընթացքում ապահովել հաշվի նվազագույն մնացորդ եւ (կամ)

բ. համապատասխան ժամանակահատվածի ընթացքում չգերազանցել հաշվով գործառնությունների սահմանված առավելագույն քանակը եւ (կամ)

գ. համապատասխան ժամանակահատվածի ընթացքում ապահովել հաշվով գործառնությունների սահմանված նվազագույն քանակ:

2) հաշվի սպասարկման համար բանկի կողմից գանձվում կամ գանձվելու է որևէ վճար:

ՀՈԴՎԱԾ 9. ԲԱՆԿԻ ԵՎ ԱՎԱՆԴԱՏՈՒԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

1. Բանկի եւ ավանդատուի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է ավանդային պայմանագրի պայմանների կամ կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է ավանդային պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքների, նորմատիվ իրավական ակտերին կամ բանկի ներքին ակտերին, կատարվում է գրավոր եղանակով՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:

2. Ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված

դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվությունը փոստային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու պայմանով: Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատուին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կապով ստանալու իր իրավունքից:

3. Եթե պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ավանդատուին առձեռն է հանձնվում բանկի տարածքում, ապա բանկը պարտավոր է առնվազն 3 տարի էլեկտրոնային կամ թղթային կրիչի վրա պահպանել ավանդատուի կողմից չպահանջված տեղեկատվությունը:

4. Ավանդի գումարի նկատմամբ վճարվող տոկոսների դրույքաչափերի վերաբերյալ ավանդատուի հարցմանը բանավոր պատասխանելու դեպքում բանկի աշխատակիցը պարտավոր է նշել տարեկան տոկոսային եկամտաբերությունը եւ պարզ տոկոսի տարեկան դրույքաչափը:

5. Ավանդային պայմանագրի պայմանների կամ կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ ավանդային պայմանագրի վրա որեւէ ազդեցություն ունեցող բանկի ներքին ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման, բանկը պարտավոր է սույն հոդվածով սահմանված կարգով տեղեկացնել ավանդատուին նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ:

6. Ավանդատուների իրավունքների պաշտպանության նպատակից ելնելով՝ Կենտրոնական բանկը իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հաղորդակցման կարգ, պայմաններ, ձևեր եւ նվազագույն պահանջներ:

ՀՈՂՎԱԾ 10. ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ, ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ, ԻՆՉՊԵՍ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավանդատուների՝ սույն օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավունքները ենթակա են պաշտպանության դատական կարգով, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ արբիտրաժային կարգով, ինչպես նաեւ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

2. Եթե ավանդային պայմանագրի առնչությամբ բանկի եւ ավանդատուի միջեւ կնքվում է արբիտրաժային համաձայնություն, ապա բանկը պարտավոր է ավանդատուի համար բացահայտել կողմերի իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ բավարար տեղեկատվություն:

3. Ավանդատուների իրավունքների պաշտպանության նպատակից ելնելով՝ Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվության նվազագույն պահանջներ եւ (կամ) օրինակելի ձև:

Բանկն իրավունք չունի ավանդային պայմանագրի կնքումը պայմանավորելու արբիտրաժային համաձայնության կնքմամբ:

ՀՈՂՎԱԾ 11. ԲԱՆԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Բանկի կողմից սույն օրենքի եւ դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար Կենտրոնական բանկը կարող է նշանակել տուգանք՝

1) հարյուր հազար դրամի չափով, եթե խախտմանը նախորդող 365 օրվա ընթացքում բանկը նշված պահանջների խախտում թույլ չի տվել:

2) երկու հարյուր հազար դրամի չափով, եթե խախտմանը նախորդող 365 օրվա ընթացքում բանկը թույլ է տվել նշված պահանջների մեկ խախտում:

3) հինգ հարյուր հազար դրամի չափով, եթե խախտմանը նախորդող 365 օրվա ընթացքում բանկը թույլ է տվել նշված պահանջների երկու եւ ավելի խախտում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերում Կենտրոնական բանկն իրավունք ունի բանկի նկատմամբ տուգանք նշանակելու խախտմանը նախորդող 365 օրվա ընթացքում բանկի նկատմամբ սույն հոդվածով սահմանված կարգով նշանակված ամենամեծ տուգանքի չափով, եթե անգամ այդ տուգանքի չափը գերազանցում

է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ եւ 3-րդ կետերով նախատեսված տուգանքների առավելագույն չափը:

3. Տուգանքը գանձվում է Կենտրոնական բանկի հայցով՝ դատարանի վճռով այն դեպքում, երբ բանկը համաձայն չէ տուգանքի նշանակման կամ տուգանքի չափի հետ: Տուգանքը գանձվում է՝ հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների:

4. Սույն օրենքի կիրառման նպատակով սույն օրենքի եւ դրա հիման վրա ընդունված այլ ակտերի յուրաքանչյուր պահանջի մի քանի խախտումներ թույլ տալու դեպքում յուրաքանչյուր խախտում համարվում է առանձին խախտում:

Սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները Կենտրոնական բանկը կիրառում է "Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 12. ԲԱՆԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԱՆԴԱՏՈՒԻ ԱՌՋԵՎ

1. Բանկի ծառայություններից օգտվող ավանդատուի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ավանդատուին 30 օրվա ընթացքում վճարել երեք հարյուր հազար դրամ:

2. Սույն հոդվածի 1-ին մասը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու ավանդատուի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

ՀՈԴՎԱԾ 13. ՎԵՐԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՐ

1. Սույն օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կենտրոնական բանկը:

ՀՈԴՎԱԾ 14. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

2. Սույն օրենքը չի տարածվում մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված ավանդային պայմանագրերի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված ավանդային պայմանագրի էական պայմաններից թեկուզեւ մեկը փոփոխվում է, կամ երբ ավանդային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է: Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված ավանդային պայմանագրի էական պայմաններից թեկուզեւ մեկը փոփոխվելու դեպքում կամ ավանդային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվելու դեպքում ամբողջ ավանդային պայմանագիրը պետք է համապատասխանեցվի սույն օրենքի պահանջներին:

12 հուլիսի 2008 թվականի
ՀՕ-124-Ն